ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ

ՎԶՄԲ վարկ No.8374-AM
ՁՄՀ վարկ No. 5504-AM
ՁՄՀ վարկ No. 5505-AM

ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է՝ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

# ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԵՎ

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող
տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Հունիս 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ........................................................................3

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ........................................................................6

ԸՍՏ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ...........7

ԾՐԱԳՐԻ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ........................................................................8

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ........................................................................19

BDO

Հեռ. +37460 528899
Էլ.փոստ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը

*Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել ՎԶՄԲ 8374-AM Վարկով, ԶՄԸ 5504-AM Վարկով և ԶՄԸ 5505-AM Վարկով ֆինանսավորվող "Համայնքների Գյուղատնտեսական Ռեսուրսների Կառավարման և Մրցունակության Երկրորդ ծրագրի" (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվությունը, ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումները և վճարումները՝ համաձայն "Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով" Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամարկղային սկզբունք):

*Կարծիքի հիմք*

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:
Մենք անկախ ենք Ծրագրից և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Հանգամանքի շեշտադրում – Ծրագիրը իրականացնող կազմակերպության փոփոխություն*

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք ներկայացնում ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություն 1.4-ին, որտեղ նկարագրված է Ծրագիրը իրականացնող կազմակերպության փոփոխությունը:

*Հանգամանքի շեշտադրում – Դրամարկղային հիմունքով հաշվետվությունների պատրաստում*

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամարկղային հիմունքով, որի պատճառով, այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ծրագրի ղեկավարությունը պատասխանատու է Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված "ՀՀՀՀՄՍ-դրամարկղային հիմունք" ստանդարտի և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (ՀԲ ուղեցույց) համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

BDO
Հեռ.՝ +37460 528899
Էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am
ՀՀ, ք. Երևան
Գ. Նժդեհի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Վարկային/Ֆինանսավորման Համաձայնագրերի պահանջների պահպանման նպատակով, Ծրագրի ղեկավարությունը պետք է ապահովի, որ.

1. Ֆոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև 2014թ. օգոստոսի 6-ին կնքված 8374-AM Վարկային Համաձայնագրում, Հայաստանի Հանրապետության և Միջազգային Զարգացման Ընկերակցության միջև 2014թ. օգոստոսի 6-ին կնքված 5504-AM և 5505-AM Ֆինանսավորման համաձայնագրում (Ֆինանսավորման համաձայնագրեր) նշված պայմաններին և

Հեռ. +37460 528899
Էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:

2. Փոխհատուցման դիմումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն Ֆինանսավորման Համաձայնագրերի:
3. Նպատակային հաշիվները վարվել են համաձայն Վարկային/Ֆինանսավորման Համաձայնագրերի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:
4. Ֆինանսավորվող աշխատանքները, ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվել համաձայն Ֆինանսավորման համաձայնագրերի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:
5. Ենթածրագրերի դրամաշնորհները համապատասխանել են Ծրագրի Գործառնական Ձեռնարկին և ենթածրագրերի դրամաշնորհների համաձայնագրերի չափորոշիչներին, ընթացակարգերին և այլ պահանջներին:

Մեր կարծիքով, 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Ծրագրի ղեկավարությունը պահպանել է նշված պահանջները:

"Բի-Դի-Օ Արմենիա" ՓԲԸ
28 հունիս, 2021թ.

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

# ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր*
*ՎԶՄԲ վարկ No.8374-AM, ԶՄԸ վարկ No.5504-AM, ԶՄԸ վարկ No.5505-AM*
*2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| *Հոդվածներ* | Փաստացի | | Նախատեսված | | Շեղում | | ԾԳՓ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվետու տարի | Անողական առ 31.12.2020 | Հաշվետու տարի | Անողական առ 31.12.2020 | Հաշվետու տարի | Անողական առ 31.12.2020 | |
| **Դրամական միջոցների սկզբնական մնացորդ** | **509,506.79** | - | | | | | |
| **Ֆոնդերի աղբյուրներ** | | | | | | | |
| ՎԶՄԲ վարկ No. 8374-AM | 2,468,063.79 | 13,374,761.33 | | | | | |
| ԶՄԸ վարկ No. 5504-AM | - | 4,316,022.44 | | | | | |
| ԶՄԸ վարկ No. 5505-AM | - | 2,400,582.15 | | | | | |
| ՀՀ Կառավարության համաֆինանսավորում | 124,299.82 | 1,222,181.68 | | | | | |
| Համայնքների համաֆինանսավորում | 269,773.88 | 2,057,536.13 | | | | | |
| Այլ շահառուներ | 745,742.38 | 3,211,981.09 | | | | | |
| Մրցութային ֆոնդեր | - | 604.13 | | | | | |
| **Ընդամենը** | **3,607,879.87** | **26,583,668.95** | | | | | |
| Փոխարժեքային օգուտ/(վնաս) | (30,974.10) | (31,530.94) | | | | | |
| **Ֆոնդերի օգտագործում** | | | | | | | |
| 1. Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր (բացառությամբ ծրագրի I բ և II ա մասերի) | 486,637.29 | 4,794,245.83 | 623,162.30 | 4,930,770.84 | (136,525.01) | (136,525.01) | 9,150,000.00 |
| 2. Ծրագրի I b և II a մասերի համայնքային ֆոնդերի ֆինանսավորում և նպատակային ենթածրագրերի դրամաշնորհներ | 3,163,791.80 | 21,264,408.71 | 4,324,450.54 | 22,425,067.45 | (1,160,658.74) | (1,160,658.74) | 30,850,000.00 |
| 3. Սկզբնական վճար | - | 57,500.00 | | 57,500.00 | - | - | 57,500.00 |
| Չբաշխված | - | - | - | - | - | - | 2,612,500.00 |
| **Ընդամենը** | **3,650,429.09** | **26,116,154.54** | **4,947,612.84** | **27,413,338.29** | **(1,297,183.75)** | **(1,297,183.75)** | **42,670,000.00** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների վերջնական մնացորդ (ծնթ. 6)** | 435,983.47 | 435,983.47 | | | | | |

*Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:*

28 հունիսի 2021թ.

**Դավիթ Մեջլումյան**
Ծրագրի ղեկավար

**Հրանտ Տեր-Վարդանյան**
Ֆինանսական ղեկավար

# ԸՍՏ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր*
*ՎԶՄԲ վարկ No.8374-AM, ԶՄԸ վարկ No.5504-AM, ԶՄԸ վարկ No.5505-AM*
*2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Բաժիններ | Փաստացի | | Նախատեսված | | Շեղում | | ԾԳՓ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվետու տարի | Աճողական առ 31.12.2020 | Հաշվետու տարի | Աճողական առ 31.12.2020 | Հաշվետու տարի | Աճողական առ 31.12.2020 | |
| **Ա. Համայնքային արոտավայրերի անասնապահության կառավարման համակարգ** | **2,005,040.15** | **16,467,863.49** | **3,153,427.48** | **17,616,250.82** | **(1,148,387.33)** | **(1,148,387.33)** | **27,870,000.00** |
| Ա.1.Արոտավայրերի անասնապահության կառավարման պլանավորում և օժանդակում | 100,228.32 | 1,040,492.13 | 88,264.18 | 1,028,527.99 | 11,964.14 | 11,964.14 | 3,870,000.00 |
| Ա.2. Համայնքային ֆոնդեր | 1,904,811.83 | 15,427,371.36 | 3,065,163.30 | 16,587,722.83 | (1,160,351.47) | (1,160,351.47) | 24,000,000.00 |
| **Բ. Արժեշղթայի զարգացում** | **1,322,985.40** | **6,028,359.10** | **1,319,439.19** | **6,024,812.89** | **3,546.21** | **3,546.21** | **7,440,000.00** |
| Բ.1. Ներդրումներ ենթածրագրերում | 1,258,979.97 | 5,837,037.35 | 1,259,287.24 | 5,837,344.62 | (307.27) | (307.27) | 6,850,000.00 |
| Բ.2. Օժանդակ ծառայություններ | 64,005.43 | 191,321.75 | 60,151.95 | 187,468.27 | 3,853.48 | 3,853.48 | 590,000.00 |
| **Գ. Պետական հատվածի կարողությունների հզորացում** | **151,426.77** | **2,147,280.99** | **213,151.99** | **2,209,006.21** | **(61,725.22)** | **(61,725.22)** | **2,450,000.00** |
| Գ.1. Հանրային անասնաբուժական ծառայություններ | 151,426.77 | 806,981.13 | 213,151.99 | 868,706.35 | (61,725.22) | (61,725.22) | 1,940,000.00 |
| Գ.2. Ինստիտուցիոնալ զարգացում | - | 1,340,299.86 | - | 1,340,299.86 | - | - | 510,000.00 |
| **Դ. Ծրագրի համակարգում և կառավարում** | **170,976.77** | **1,415,150.96** | **261,594.18** | **1,505,768.37** | **(90,617.41)** | **(90,617.41)** | **2,240,000.00** |
| Դ.1.Ծրագրի կառավարում | 161,017.37 | 1,325,903.36 | 252,779.18 | 1,417,665.17 | (91,761.81) | (91,761.81) | 1,740,000.00 |
| Դ.2. Մոնիտորինգ և գնահատում | 9,959.40 | 89,247.60 | 8,815.00 | 88,103.20 | 1,144.40 | 1,144.40 | 500,000.00 |
| Ծրագրի սպասարկման վճար | - | 57,500.00 | - | 57,500.00 | - | - | 57,500.00 |
| Չբաշխված | - | - | -- | - | - | | 2,612,500.00 |
| **Ընդամենը ծախսեր** | **3,650,429.09** | **26,116,154.54** | **4,947,612.84** | **27,413,338.29** | **(1,297,183.75)** | **(1,297,183.75)** | **42,670,000.00** |

*Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:*
28 հունիսի 2021թ.

**Դավիթ Մեջլումյան**
Ծրագրի ղեկավար

**Հրանտ Տեր-Վարդանյան**
Ֆինանսական ղեկավար

## ԾՐԱԳՐԻ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր*
*ՎԶՄԲ վարկ No.8374-AM, ԶՄԸ վարկ No.5504-AM, ԶՄԸ վարկ No.5505-AM*
*2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ*

### 1. Ընդհանուր տեղեկություններ

#### *1.1. Ծրագիր*

2014թ. օգոստոսի 6-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև ստորագրվել է Վարկային համաձայնագիր, համաձայն որի ՎԶՄԲ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել No.8374-AM վարկը՝ 23,000,000 ԱՄՆ դոլար գումարով:

2014թ. օգոստոսի 6-ին Հայաստանի Հանրապետության և Զարգացման Միջազգային Ընկերակցության (ԶՄԸ) միջև ստորագրվել է Ֆինանսավորման համաձայնագիր, համաձայն որի ԶՄԸ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել No.5504-AM վարկը՝ 3,800,000 Հատուկ Փոխարկման Իրավունքի (SDR) գումարով և No.5505-AM վարկը՝ 2,460,000 Հատուկ Փոխարկման Իրավունքի (SDR) գումարով: 2020թ. օգոստոսի 26-ին վարկային համաձայնագրի փոփոխության համաձայն No.5504-AM վարկի գումարը սահմանվել է 3,159,673 ՀՓԻ (SDR):

Վարկերը տրամադրվել են «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի» (Ծրագիր) իրականացման համար:

Վարկային համաձայնագրերը ուժի մեջ են մտել 2015թ. հունվարի 23-ին:

Ծրագրի վերջնաժամկետը ի սկզբանե սահմանվել է 2020թ. մայիսի 31-ը: 2020թ. մարտի 26-ին Վարկային համաձայնագրերում կատարվել են փոփոխություններ, որոնցով Ծրագրի վերջնաժամկետը սահմանվել է 2022թ. ապրիլի 30-ը: Փոխհատուցման դիմումների ներկայացման արտոնյալ ժամանակաշրջանը Ծրագրի ավարտից հետո չորս ամիս է:

#### *1.2. Ծրագրի նպատակները*

Ծրագրի նպատակներն են. 1) ընտրված համայնքներում բարելավել գյուղատնտեսական և անասնապահական կառավարման համակարգերի արդյունավետությունը և կայունությունը և 2) ավելացնել ընտրված անասնապահական և բարձրարժեք ագրոպարենային արժեշղթաների արտադրանքի շուկայահանումը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Համայնքային արոտավայրերի անասնապահության կառավարման համակարգ,
- Արժեշղթայի զարգացում,
- Պետական հատվածի կարողությունների հզորացում,
- Ծրագրի համակարգում և կառավարում:

#### *1.3. Ծրագրի բյուջեն*

Ծրագիրը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից.

- Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (ՎԶՄԲ),
- Զարգացման Միջազգային Ընկերակցություն (ԶՄԸ),
- Հայաստանի Հանրապետության Կառավարություն (ՀՀ Կառավարություն),
- Շահառուներ:

| Կատեգորիա | ՎԶՄԲ վարկ 8374-AM | ԶՄԸ վարկ 5504-AM | | | ԶՄԸ վարկ 5505-AM | | | ՀՀ Կառավարություն | Շահառուներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | USD | SDR սկզբնական | SDR փոփոխված* | USD քարմացված** | SDR սկզբնական | SDR փոփոխված* | USD քարմացված** | USD | USD | USD |
| 1.Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր (բացառությամբ ծրագրի I բ և II ա մասերի) | 4,800,000 | 930,000 | 928,704 | 1,280,243 | 450,000 | 990,000 | 1,406,110 | 2,460,785 | - | **9,947,138** |
| 2.Ծրագրի I b և II a մասերի համայնքային ֆոնդերի ֆինանսավորում և նպատակային ենթածրագրերի դրամաշնորհներ | 18,142,500 | 2,170,000 | 2,230,969 | 3,124,817 | 1,050,000 | 1,470,000 | 2,050,893 | 1,806,752 | 5,728,000 | **30,852,962** |
| Ծրագրի սպասարկման վճար | 57,500 | - | - | - | - | - | | - | - | **57,500** |
| Չբաշխված | - | 700,000 | - | - | 960,000 | - | | - | - | **-** |
| **Ընդամենը** | **23,000,000** | **3,800,000** | **3,159,673** | **4,405,060** | **2,460,000** | **2,460,000** | **3,457,002** | **4,267,537** | **5,728,000** | **40,857,599** |

* Վարկային համաձայնագրերի փոփոխություն 26 մարտի 2020թ., և 26 օգոստոսի 2020թ.:

** Վարկի գծով SDR-ով արտահայտված բյուջեի ԱՄՆ դոլարով համարժեքը հաշվարկվում է՝ ԱՄՆ դոլարով ստացած կուտակային ֆոնդերին ավելացնելով հաշվետու ամսաթվի դրությամբ SDR-ով դեռևս չբաշխված ֆոնդի ԱՄՆ դոլարով համարժեքը (եթե առկա է): 31.12.2020թ. դրությամբ SDR/USD փոխարժեքը սահմանված է 1 SDR =1.44027 USD (31.12.2019թ.՝ 1.3828):

*1.4. Ծրագրի իրականացում*

Մինչև 2017թ. հոկտեմբերի 13-ը Ծրագիրը իրականացվել է «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» (ԳԾԻԳ) պետական հիմնարկի կողմից, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 1999թ. դեկտեմբերի 22-ի թիվ 765 որոշման համաձայն:
Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017թ. մարտի 9-ի թիվ 243-Ա որոշումով հանձնարարվել է ՀՀ Ֆինանսների նախարարին և ՀՀ Գյուղատնտեսության նախարարին Ծրագրի վարկային համաձայնագրերում կատարել փոփոխություններ՝ այդ համաձայնագրերի իրականացումը վերապահել Գյուղատնտեսության Զարգացման Հիմնադրամին, իսկ ֆիդուցիար հատվածի իրականացումը՝ ՀՀ Ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկին (ԱՖԾԿԿ): Վարկային համաձայնագրերում համապատասխան փոփոխությունները հաստատվել են ՀՀ Նախագահի հրամանագրով: Հրամանագիրը ուժի մեջ է մտել 2017թ. հոկտեմբերի 12-ից:

2017թ. նոյեմբեր ամսից մինչև 2019թ. մարտի 29-ը Ծրագրի ֆիդուցիար մասը իրականացվել է ԱՖԾԿԿ-ի կողմից:
2019թ. մարտի 29-ից մինչև 2019թ. հունիսի 01-ը ՀՀ կառավարության 2019թ. մարտի 21-ի N 283-Ա որոշմամբ Ծրագրի իրականացումը և ֆիդուցիար հատվածի իրականացումը վերապահվել է ՀՀ Գյուղատնտեսության նախարարությանը:

2019թ. հունիսի 1-ից հետո «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքում (2018թ. մարտի 23-ի ՀՕ-253-Ն) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունը և ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը միաձուլման ձևով վերակազմակերպվել են՝ ստեղծելով ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն: Ներկայումս Ծրագիրը իրականացվում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից, համակարգող՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչություն:

## 2. Հաշվապահական հաշվառման նշանակալից քաղաքականության ամփոփ

*2.1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում*

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Ստանդարտի համաձայն, և ներկայացվել են Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի՝ «RM 3- Ֆինանսական Հաշվետվողականություն և Աուդիտ»-ի (մարտ 2010) համաձայն:

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները ներառում են.
- դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվությունը,
- ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը,
- Հաշվապահական հաշվառման նշանակալից քաղաքականության ամփոփ և այլ ծանոթագրությունները:

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն ամբողջ ներկայացված ժամանակահատվածում:

### *2.2 Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունք*

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են՝ կիրառելով հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքը:
Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի կիրառման դեպքում գործարքները և այլ դեպքերը ճանաչվում են միայն այն դեպքում, երբ դրամական միջոցները կամ համարժեքները ստացվել են կամ վճարվել:
Դրամարկղային հիմունքով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները տրամադրում են տեղեկատվություն ժամանակաշրջանում ստացված դրամական միջոցների աղբյուրների, դրամական միջոցների օգտագործման ուղղությունների և հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ:

### *2.3. Ներկայացման արժույթը*

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

### *2.4. Գործարքներ արտարժույթով*

Արտարժույթը դա Ծրագրի ներկայացման արժույթից տարբերվող արժույթն է:
Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ներկայացման արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքը:

Ծրագրի բանկային հաշիվները վարվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով: ՀՀ դրամով արտահայտված գործարքները փոխարկվում են ԱՄՆ դոլարի հետևյալ կերպ.

- ՀՀ դրամով արտահայտված Հայաստանի Հանրապետության և շահառումների հատկացումները ներկայացվում են ԱՄՆ դոլարով՝ յուրաքանչյուր փոխանցման օրվա ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքով,
- ՀՀ դրամով արտահայտված ծախսերի վճարումները կապալառուներին և մատակարարներին ներկայացվում են ԱՄՆ դոլարով վճարման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքով:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 479.70 ՀՀ դրամ:
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 522.59 դրամ:

### *2.5. Հարկեր*

Բոլոր կիրառելի հարկերը վճարվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

## 3. Վարկային միջոցների առհանումների հաշվետվություն (SOE և SUMMARY SHEET)

*2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ*

### 3.1. ՋՄԸ Վարկ 5504-AM

Հաշվետու ժամանակաշրջանում ՋՄԸ 5504-AM վարկի գծով առհանումների դիմումներ չեն ներկայացվել:

### 3.2. ՋՄԸ Վարկ 5505-AM

Հաշվետու ժամանակաշրջանում ՋՄԸ 5505-AM վարկի գծով առհանումների դիմումներ չեն ներկայացվել:

### 3.3. ՎՁՄԲ Վարկ 8374-AM

| Դիմումի համար | Դիմումի հաստատման ամսաթիվ | 1 .Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր (բացառությամբ ծրագրի I բ և II ա մասերի) | 2. Ծրագրի I b և II a մասերի համայնքային ֆոնդերի ֆինանսավորում և նպատակային ենթածրագրերի դրամաշնորհներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | | *ԱՄՆ դոլար* | *ԱՄՆ դոլար* | *ԱՄՆ դոլար* |
| 23 | 24.07.2020 | 295,491.43 | 981,211.85 | 1,276,703.28 |
| 25 | 09.11.2020 | 125,904.69 | 665,455.82 | 791,360.51 |
| **Ընդամենը** | | **421,396.12** | **1,646,667.67** | **2,068,063.79** |

## 4. Նպատակային հաշվի հաշվետվություն

### 4.1.ՁՄԸ Վարկ 5504-AM և ՁՄԸ Վարկ 5505-AM

| Նպատակային հաշիվ | ՁՄԸ Վարկ 5504-AM և ՁՄԸ Վարկ 5505-AM |
|---|---|
| Արժույթ | ԱՄՆ դոլար |
| Հաշվարկային հաշիվ | 900000903873 |
| Բանկ | Կենտրոնական գանձապետարան |
| Հասցե | Մելիք-Ադամյան 1, Երևան, 0010, Հայաստանի Հանրապետություն |

| | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ |
|---|---|
| | ԱՄՆ դոլար |
| **1. Սկզբնական մնացորդ 01.01.2020** | - |
| Ավելացում. | |
| 2. Աճողական սկզբնական անհամապատասխանություն | - |
| 3. ՁՄԸ-ի ֆոնդի կանխավճար/համալրում | - |
| Նվազեցում. | |
| 4. Նպատակային հաշվից մարում ՁՄԸ-ին | - |
| **5. Նպատակային հաշվին կանխավճարի ներկա մնացորդը** | - |
| 6. Նպատակային հաշվի մնացորդ 31.12.2020թ. դրությամբ | - |
| Ավելացում. | |
| 7. Վճարված ընդունելի ծախսերի գումար | - |
| Նվազեցում. | |
| 8. Ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշիվ) | - |
| **9. Ընդամենը հաշվետու կանխավճար** | - |
| 10. Տարբերություն (5) - (9) | - |

4.2.ՎԶՄԲ Վարկ 8374-AM

| Նպատակային հաշիվ | ՎԶՄԲ Վարկ 8374-AM |
|---|---|
| Արժույթ | ԱՄՆ դոլար |
| Հաշվարկային հաշիվ | 900000903881 |
| Բանկ | Կենտրոնական գանձապետարան<br>Մելիք-Ադամյան 1, Երևան, 0010, Հայաստանի Հանրապետություն |
| Հասցե | |

| | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ<br>ԱՄՆ դոլար |
|---|---|
| **1. Սկզբնական մնացորդ 01.01.2020** | 144,525.05 |
| Ավելացում. | |
| 2. Անողական սկզբնական անհամապատասխանություն | - |
| 3. ՎԶՄԲ-ի ֆոնդի կանխավճար/համալրում | 2,468,063.79 |
| Նվազեցում. | |
| 4. Նպատակային հաշվից մարում ՎԶՄԲ-ին | - |
| **5. Նպատակային հաշվին կանխավճարի ներկա մնացորդը** | **2,612,588.84** |
| 6. Նպատակային հաշվի մնացորդ 31.12.2020թ. դրությամբ | 125,920.84 |
| Ավելացում.<br>7. Վճարված ընդունելի ծախսերի գումար | 2,486,668.00 |
| Նվազեցում. | |
| 8. Ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշիվ) | - |
| **9. Ընդամենը հաշվառված համալրում** | **2,612,588.84** |
| 10. Տարբերություն (5) - (9) | - |

## 5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներկայացնում է ակտիվները, պարտավորությունները և Ծրագրի զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն պատրաստված է հաշվեգրման հիմունքով, որտեղ գործառնությունները ճանաչվում են տեղի ունենալու պահին (այլ ոչ՝ դրամական միջոցների ստացման կամ վճարման պահին):

| | ծնթ. | 31.12.2020<br>ԱՄՆ դոլար | 01.01.2020<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 6 | 435,983.47 | 509,506.79 |
| Կանխավճարներ | | 123,424.75 | 44,656.49 |
| **Ընդամենը ակտիվներ** | | **559,408.22** | **554,163.28** |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| Կրեդիտորական պարտքեր | | 79,948.48 | 88,480.85 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **79,948.48** | **88,480.85** |
| **ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| **Աճողական մուտքեր** | | | |
| ՎԶՄԲ վարկ No. 8374-AM | 8.1 | 13,374,761.33 | 10,906,697.54 |
| ԶՄԸ վարկ No. 5504-AM | 8.2 | 4,316,022.44 | 4,316,022.44 |
| ԶՄԸ վարկ No. 5505-AM | 8.3 | 2,400,582.15 | 2,400,582.15 |
| ՀՀ Կառավարության համաֆինանսավորում | 8.4 | 1,222,181.68 | 1,097,881.86 |
| Համայնքների համաֆինանսավորում | 8.5 | 2,057,536.13 | 1,787,762.25 |
| Այլ շահառուներ | 8.5 | 3,211,981.09 | 2,466,238.71 |
| Մրցութային ֆոնդ | | 604.13 | 604.13 |
| | | **26,583,668.95** | **22,975,789.08** |
| **Աճողական ծախսումներ** | | | |
| Ծրագրի ծախսումներ | | (26,046,803.11) | (22,462,118.11) |
| | | **(26,046,803.11)** | **(22,462,118.11)** |
| **Արտարժույթի փոխարժեքային օգուտ/(վնաս)** | | (57,406.10) | (47,988.54) |
| **Ընդամենը զուտ ակտիվներ** | | **479,459.74** | **465,682.43** |

## 6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| | **Բանկ** | **Արժույթը** | **31.12.2020**<br>**ԱՄՆ դոլար** | **01.01.2020**<br>**ԱՄՆ դոլար** |
|---|---|---|---|---|
| Նպատակային հաշիվ (ԶՄԸ Վարկ 5504-AM, 5505-AM) | Գանձապետարան | ԱՄՆ դոլար | - | - |
| Նպատակային հաշիվ (ՎԶՄԲ Վարկ 8374-AM) | Գանձապետարան | ԱՄՆ դոլար | 125,920.84 | 144,525.05 |
| ՀՀ Կառավարության համաֆինանսավորման հաշիվ | Գանձապետարան | ՀՀ դրամ | - | - |
| Համայնքների համաֆինանսավորման հաշիվ | Գանձապետարան | ՀՀ դրամ | 310,062.63 | 364,981.74 |
| Մրցութային ֆոնդի հաշիվ | Գանձապետարան | ՀՀ դրամ | - | - |
| **Ընդամենը** | | | **435,983.47** | **509,506.79** |

## 7. Ծրագրային ծախսեր

### *7.1. Ծախսերի բաշխումը ըստ ֆոնդերի*

| Ծախսային հոդվածներ | ՎԶՄԲ Վարկ 8374-AM | ԶՄԸ Վարկ 5504-AM | ԶՄԸ Վարկ 5505-AM | ՀՀ Կառավարություն | Համայնքների միջոցներ | Այլ շահառուներ | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| **Հաշվետու տարի** | | | | | | | |
| 1. Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր (բացառությամբ ծրագրի I բ և II ա մասերի) | 365,100.76 | - | - | 121,536.54 | - | - | **486,637.30** |
| 2.Ծրագրի I b և II a մասերի համայնքային ֆոնդերի ֆինանսավորում և նպատակային ենթածրագրերի դրամաշնորհներ | 2,121,567.24 | - | - | - | 296,482.17 | 745,742.38 | **3,163,791.79** |
| 3. Ծրագրի սպասարկման վճար | - | - | - | - | - | - | **-** |
| **Ընդամենը** | **2,486,668.00** | **-** | **-** | **121,536.54** | **296,482.17** | **745,742.38** | **3,650,429.09** |
| **Անողական 31.12.2020թ. դրությամբ** | | | | | | | |
| 1. Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր (բացառությամբ ծրագրի I բ և II ա մասերի) | 1,692,803.69 | 1,354,829.19 | 549,914.17 | 1,196,226.08 | - | 472.71 | 4,794,245.84 |
| 2.Ծրագրի I b և II a մասերի համայնքային ֆոնդերի ֆինանսավորում և նպատակային ենթածրագրերի դրամաշնորհներ | 11,498,536.80 | 2,961,193.25 | 1,850,667.98 | 21,914.49 | 1,720,115.32 | 3,211,980.86 | 21,264,408.70 |
| 3. Ծրագրի սպասարկման վճար | 57,500.00 | - | - | - | - | - | 57,500.00 |
| **Ընդամենը** | **13,248,840.49** | **4,316,022.44** | **2,400,582.15** | **1,218,140.57** | **1,720,115.32** | **3,212,453.57** | **26,116,154.54** |

### *7.2. Ծրագրային ծախսերի բյուջեի կատարում*

| Ծախսային հոդված | Աճողական ծախսումներ առ 31 դեկտեմբերի 2020<br>ԱՄՆ դոլար | Ընդամենը բյուջե<br>ԱՄՆ դոլար | Կատարում<br>% |
|---|---|---|---|
| 1. Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր (բացառությամբ ծրագրի I բ և II ա մասերի) | 4,794,246 | 9,947,138 | 48% |
| 2.Ծրագրի I b և II a մասերի համայնքային ֆոնդերի ֆինանսավորում և նպատակային ենթածրագրերի դրամաշնորհներ | 21,264,409 | 30,852,962 | 69% |
| 3. Ծրագրի սպասարկման վճար | 57,500 | 57,500 | 100% |
| Չբաշխված | - | - | - |
| **Ընդամենը** | **26,116,155** | **40,857,599** | **64%** |

## 8. Ֆինանսավորում

### *8.1. ՎԶՄԲ վարկ 8374-AM*

| | Հաշվետու տարի<br>ԱՄՆ դոլար | Աճողական առ 31.12.2020<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| Կանխավճար/(Կանխավճարի մարում) | 400,000.00 | 1,500,000.00 |
| Փոխհատուցում (SOE և Summary Sheet) | 2,068,063.79 | 11,817,261.33 |
| Նախավճար (Front-end fee) | - | 57,500.00 |
| | 2,468,063.79 | 13,374,761.33 |
| **Ընդամենը բյուջե** | | 23,000,000.00 |
| **Առ 31.12.2020 տրամադրված ֆինանսավորում %** | | 58% |

### *8.2. ԶՄԸ վարկ 5504-AM*

| | Հաշվետու տարի<br>ԱՄՆ դոլար | Աճողական առ 31.12.2020<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| Կանխավճար/(Կանխավճարի մարում) | - | - |
| Փոխհատուցում(SOE և Summary Sheet) | - | 4,316,022.44 |
| | - | 4,316,022.44 |
| **Ընդամենը բյուջե** | | 4,405,060.00 |
| **Առ 31.12.2020 տրամադրված ֆինանսավորում %** | | 98% |

*8.3. ՁՄԸ վարկ 5505-AM*

| | Հաշվետու տարի | Անողական առ 31.12.2020 |
|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| Կանխավճար/(մարում) | - | - |
| Փոխհատուցում(SOE և Summary Sheet) | - | 2,400,582.15 |
| | **-** | **2,400,582.15** |
| **Ընդամենը բյուջե** | | **3,457,002.00** |
| **Առ 31.12.2020 տրամադրված ֆինանսավորում %** | | **69%** |

*8.4. ՀՀ Կառավարություն*

| | Հաշվետու տարի | Անողական առ 31.12.2020 |
|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| **Ֆինանսավորում** | 124,299.82 | 1,222,181.68 |
| **Ընդամենը բյուջե** | | **4,267,537.00** |
| **Առ 31.12.2020 տրամադրված ֆինանսավորում %** | | **29%** |

*8.5. Շահառուներ*

| | Հաշվետու տարի | Անողական առ 31.12.2020 |
|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | **ԱՄՆ դոլար** |
| Համայնքային միջոցներ | 269,773.88 | 2,057,536.13 |
| Այլ շահառուներ | 745,742.38 | 3,212,585.22 |
| | **1,015,516.26** | **5,270,121.35** |
| **Ընդամենը բյուջե** | | **5,728,000.00** |
| **Առ 31.12.2020 տրամադրված ֆինանսավորում %** | | **92%** |

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

*Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր*
*ՎԶՄԲ վարկ No.8374-AM, ԶՄԸ վարկ No.5504-AM, ԶՄԸ վարկ No.5505-AM*
*2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

**ՎԶՄԲ Վարկ-8374-AM**

| Ծախսային հոդված | Դիմում | Ծրագիր | ՀԲ | Տարբերություն |
|---|---|---|---|---|
| Կանխավճար/(մարում) | 21 | 200,000.00 | 200,000.00 | - |
| | 22 | 200,000.00 | 200,000.00 | - |
| | 23 | (676,703.28) | (676,703.28) | - |
| | 24 | 600,000.00 | 600,000.00 | - |
| | 26 | 76,703.28 | 76,703.28 | - |
| | | **400,000.00** | **400,000.00** | - |
| 1. Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր (բացառությամբ ծրագրի I բ և II ա մասերի) | 23 | 295,491.43 | 295,491.43 | - |
| | 25 | 125,904.69 | 125,904.69 | - |
| | | **421,396.12** | **421,396.12** | - |
| 2.Ծրագրի I b և II a մասերի համայնքային փոնդերի ֆինանսավորում և նպատակային ենթածրագրերի դրամաշնորհներ | 23 | 981,211.85 | 981,211.85 | - |
| | 25 | 665,455.82 | 665,455.82 | - |
| | | **1,646,667.67** | **1,646,667.67** | - |
| | | **2,468,063.79** | **2,468,063.79** | - |

**ԶՄԸ Վարկ No.5504-AM**

Հաշվետու ժամանակաշրջանում ԶՄԸ 5504-AM վարկի գծով առհանումների դիմումներ չեն ներկայացվել:

**ԶՄԸ վարկ No.5505-AM**

Հաշվետու ժամանակաշրջանում ԶՄԸ 5505-AM վարկի գծով առհանումների դիմումներ չեն ներկայացվել: